

ԷԶՄԻԱԾՆԻ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

1655 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԱՅՍ անգամուան Չատիկին կանուխ հասնիլը, որ հազուադէպ է, միանգամայն կը մօտեցնէ Բուն Բարեկենդանը՝ որով Արեւելքի մէջ կը վերջանային բարեկենդանին զուարթ խրախճանութիւնները որոնք այժմ Արեւմուտքի մէջ մինչեւ Մոլորոցին օրը կը շարունակուին:

Եւ այսքանը իբրեւ թէ չբաւէր, Մկրտումեան Տօնին յաջորդ օրէն սկսուած այդ նոր բարեկենդանին վերջին բարեւր խտալիոյ մէջ, զոր օրինակ, Մեծպահքի կէսին կը արուի ժողովրդական ցնծութեամբ և ցայգահանդէսներով:

Միեւնոյն օրուան երեկոյեան դէմ, ինչ ինչ տեղեր, ըստ հին սովորութեան մը, ցնցոտիներ հագուած պառաւիկ [La vecchia] մարդապատկերը կ'այրեն՝ նախապէս երեւակայական այդ չարագործ վհուկին դատաւարութիւնը հրապարակօրէն տեսնելէն և մահաւճիւղը արձակելէն յետոյ:

Ժողովրդական այս այլարանութիւնը կ'ակնարկէ Հեթանոսութեան ժամանակ պաշտուած իզիս, Հեռթա, կամ տղարբերին պաշտպան զիցուհիներուն [Iunone prenuba] բնաջնջումին, որոնց կործանած տաճարներուն վրան՝ Քրիստոնէութիւնը յետոյ, Տիրամօր և նախավկայ նահատակ սուրբերուն ընծայուած հոյակապ եկեղեցիները պիտի կանգնէր:

Կ'անցնին դարերը, իրար յաջորդելով. այլ աւանդութիւնները կը շարունակեն, տարբեր տարբեր եղանակով:

Եւ ինչ որ Եւրոպա հանդիպած է, հաւանօրէն Փոքր Ասիոյ մէջ ալ տեղի ունեցաւ: Լաւագոյն վկան Ագաթանգեղոսն

է: Տաճարներու և ինչ որ կարեւորագոյնն էր արքունի դիւաններու ափսոսալի փճացումով, որոնցմով՝ եթէ հետագայ բարբարոս դարերուն աւերէն ալ վերապրած ըլլային, Արեւելեան հին ժողովուրդները, ինչպէս հայերը, իրենց ծագումին և ազգային պատմութեան հնութիւնը կարող կ'ըլլային փաստացի հաստատել:

Պրանսացի նշանաւոր ճանապարհորդը, Դավէտնիէ ⁽¹⁾, Լուդովիկոս ԺԳ-ին [1638-1715] ժամանակակից, որ իր հայրենիքին մատուցած ծառայութիւններուն փոխարէն այդ մեծանուն Արքայէն Պառօնի տիտղոսով մեծարուած էր, բազմահատոր իր յիշատակարաններուն մէջ, 1655 թուականին, Երեւանէն անցած տեսն, Հայոց բարեկենդանին վերջին օրուան խրախճանքին ներկայ գտնուիլը մանրամասն կը պատմէ՝ այդ թուականին Էջմիածնի Աթոռին վրայ բազմող կաթողիկոսէն յատկապէս հրաւիրուած և պատուասիրուած. որուն հետ արդէն, նախապէս, երեք ժամուան մտերմական տեսակցութիւն մը ունեցած էր:

«Այն բոլոր ժամանակը, կը գրէ, որ կարաւանը Երեք Եկեղեցիներուն քով դա-

1. J. B. Tavernier. Ecuyer, Baron d'Aubone, qui a fait en Turquie, en Perse et aux Indes six voyages pendant quarante ans.

Nouvelle Edition revue et corrigée, 1713 à Rouen chez Eustache Hérault

դար առաւ, Հայրապետը [Le Patriarche] զիս պատուելու համար ամէն օր զինի, պտուղներ կը զրկէր, որոնց ստէպ կ'աւելցնէր երկուքէն երեք ոտնաչափ [33 հարիւրորդամիզը] մեծութեամբ կարմրախայտ (truite) ձուկեր »:

Այլ որովհետեւ լայնախոն և հիւրասէր այդ Հայրապետին անունը չէ յիշատակուած, մեզի կ'իյնայ զայն ճշտել. ինչ որ դժուար պիտի չըլլայ, քանի որ թուականը յայտնի է՝ 1655:

Սակայն պէտք է նաեւ ըսել որ Դավէտնիէն այդ անունը եթէ տուած իսկ ըլլար, ա՛ն ալ միւսերուն նման աղաւաղեալ մեզի պիտի հասնէր. քանզի անոր զրութեանց մէջ յիշատակուած հայ անուններն ու տեղանունները, ինչպէս կարգ մը ասումներ, մեծ մասով չեն համապատասխաներ ա՛նոնց իսկական հնչումին: Դժուարութիւն մը որ եւրոպական լեզուները՝ աթուրթայի աղքատութեան հետեւանքով, միշտ կրած են և կը կրեն տակաւին, և նոյնիսկ իրենց միջեւ:

Դավէտնիէն այդ նկարագրութիւնը թարգմանաբար տալէն առաջ՝ կ'արժէ ա՛նոր մասին մի քանի ծանօթութիւններ՝ վերապահելով ուրիշ առիթի մը աւելի ընդարձակ վերարտադրութիւն մը անոր հաղորդած խիստ ուշագրաւ տեղեկութիւններուն՝ հայոց բարբերուն և կրօնքին նկատմամբ. և թէ ո՞ր ուղղութեամբ՝ Բաւրիզէն մեկնելով, նա կատարած է իր հեռաւոր վեց ճամբորդութիւնները դէպի Ասիայի խորերը, Հնդկաստանէն ալ աւելի անդին, մինչեւ Ճաւա:

Այդ իր ճանապարհորդութեանց ամէն վերադարձին, բացի վերջինէն որ Բարեւ յուսոյ հրուանդանին ճամբով Ափրիկէն շրջանաւեց, հայասէր Պրանսացին Հայաստանէն անցնելու սովոր էր Դավէտ-Երզրում-Թոգաթի կարաւանին մասնակցելով:

Սակայն, նոր աշխարհներ այցելելու իր արկածախնդրական փափաքին՝ նա յաջո-

ղած էր միացնել նաեւ վաճառականական նպատակ: Պրանսայէն կ'արտածէր, Արեւելքէն կը ներածէր:

Անոր յաճախորդները մեծ մասով Արքունականները եղան:

Նախ և առաջ Պարսից և Մոնկոլներուն թագաւորները, և մասնաւորապէս Լուդովիկոս ԺԳ-ին նման փառասէր և հեշտասէր երիտասարդ Արքայն: Արեւելքէն ներածուած արդեօք որքան գոհարեղէններ, աղամանդներ անոր սիրական Լավալիէնը և հրաշագեղ Մատամ Մօնդասանը պճնազարդեցին: Թերեւս Տիւմա Հօր յաւերժացուցած Տ'Արդանեանին մատներուն վրան ալ փայլեցան Մայր Թագուհիին առատաձեռնութեամբ:

Փանզի Դավէտնիէն, Պառօն չգարձած, հրացանակիրներու (Mousquetaires) զուգին պատկանած էր. հետեւաբար ա՛նոնց քաջարի կասկօնցի պիտին հետ ալ, որուն ճիշդ ժամանակակից էր, մտերմաբար աջակցած:

Յամենայն դէպս, Եւրոպան, Ասիան և Ափրիկէն շրջանակի յամաքէն և ծովէն չափչափելով, կ'ըստի թէ Դավէտնիէն, քառասուն տարուան մէջ, 76 հազար քիլոմետր կտրած անցած էր:

Ասոր համար անոր կենսագրականին մէջ բարեկամներէն մին, որ միասին ճանապարհորդած էր,

«Հոմերոսի առասպելախառն Ողիսեւէն աւելի աշխարհներ տեսաւ» կ'ըսէ և անոր կը նուիրէ հետեւեալ ոտանաւոր չորս տողերը:

Հոմերոսը առաւել փառք կը շահէր
Ի Ողիսականն ալ լաւագոյն յաջող եւք՝
Եթէ անոր գիւցազն ըլլար ասոր նման.
Փոխան վէպի կ'ունենայինք պատմութիւն:

Եւրոպական բոլոր լեզուներուն վարժ Դավէտնիէն, հայ վաճառականներուն հետ

մտերմաբար շարունակ կենակցելով հանդերձ, մեր լեզուին չէր յաջողած մտերմանալ, հակառակ որ թուրքերայէն անցած ատեն հայ թարգման մը միատեղ կը պտտցնէր. անոր հաւատարիմ սպասաւորները հայ էին, և ամէն անգամ իսպահան հասնելուն՝ նոր Զուղայի հայերուն քով կը նախընտրէր բնակիլ, որոնց ազգապետին միջոցով յաջողած էր պարսիկ Շահին առաջին անգամ ներկայանալ և անոր հետ գործառնութեան սկսիլ, յոյժ շահաւէտ հետեւանքով:

Սակայն անոր հայասիրութեան ամենամեծ ապացոյցը կը նկատեմ, 1663-ի ճանապարհորդութեան առթիւ պատանի եղբորորդին միատեղ տանիլը, որպէս զի Դավէտի փրանկիսկեան — որքան ալ որ Դավէտիէն բողոքական էր — վեղարաւոր կրօնաւորներուն [Capucins] քով դաստիարակուելով, Հայերէնին և Տաճկերէնին տիրանար:

Արդարեւ այդ պատանին այնքան յաջող կերպով տիրացաւ և սիրեց մեր բարքերը որ՝ երբոր մեծցաւ, Զաքար անուն մեծահարուստ պարսկահայ վաճառականի մը աղջիկը կնութեան առաւ:

Տարիներ յետոյ, Դավէտիէն այդ մի և նոյն եղբորորդւոյն պիտի յանձնէր, Զաքարի հսկողութեան ներքեւ, Բարիզի մէջ կազմակերպած իր վերջին մեծարժէք կարաւանը, որմէ որ և է տեղեկութիւն չստանալուն համար պարտաւորուեցաւ ծեր հասակին, վերսկսիլ իր ճամբորդութիւնները, այս անգամ Ռուսաստանի ճամբով դէպի Պարսկաստան:

Բայց ինչ որ կը հասկցուի, քանզի որոշ է, հոն չհասած կը վախճանի. ըստ ոմանց 1687 թուականին. ըստ այլոց՝ 1689ին:

Դավէտիէն 1605 թուականին ծնած էր:

«Անշուք վերջ, կ'ափսոսայ բարեկամ կենսազորողը, այդպիսի մարդու մը համար՝ որ աւելի երջանիկ և փառաւոր վախճանի մը արժանի էր. քանզի նա եղաւ, սպանիացիներուն ըսածին պէս *hijo de sus*

obras = l'artisan et l'ouvrier de ses œuvres» այսինքն՝ ինքնօգնութեամբ հասած, հարստութիւնն ու դիրքը իր իսկ ձեռքով կերտած:

Կը մնայ արդ ընթերցողիս ծանօթացնել Դավէտիէի 1655 թուականին այցելութեան ատեն Լեւոնիւմի կաթողիկոսական Աթոռին վրայ բազմող Հայրապետը՝ որ բուն բարեկենդանի կէսօրուան մեծահանդէս ճաշին նախագահելով, նախ հացը օրհնեց՝ որմէ պատառ մը բերանը դրաւ, յետոյ զինին՝ որմէ բնաւ չխմեց:

Դավէտիէի այս խօսքերէն կարելի է կասկածիլ որ սրբազնասուրբ Հայրապետին առողջութիւնը խանգարուած ըլլալուն համար դարմանող բժիշկը խիստ պահեցողութիւն մը պատուիրած էր անոր, նոյն իսկ այդպիսի արտակարգ պարագային, երբոր անոր փափաքին և հրաւերին վրան՝ կարաւանին պատկանող ականաւոր և հայ վաճառականներուն հետ բոլոր եւրոպացիները, դասակարգի և դաւանանքի առանց խտրութեան, հաւաքուած կը զրուէին քրիստոնէական առաջին դարերուն նմանող եղբայրական ճաշի մը [agape] սեղանին շուրջը:

Պերճախօս, որքան նուրբ դիւանագէտ այդ իմաստուն, խոնարհամիտ և մեծահանճար [Զամչեան հտ. Գ. 613] կաթողիկոսը նոյն ինքը երեւելի Հաղբակեցի փրկիպոս վարդապետն էր, որուն ընտրութեան համար, Մովսէս կաթողիկոսին մահուան բօթալից լուրին վրայ, Արեւմուտքէն և Արեւելքէն Լեւոնիւմի հասած նամակները նկատելով, Միաբանները, «առեալ զայսպիսի հաւանութիւն Ազգին, օծին կաթողիկոս զՓրկիպոս յամին տեառն 1633 և ի թուին Հայոց ՌՅԲ յ13 աւուր ամսեանն Յունվարի»:

Առաքել պատմիչը, որ ականատես

գտնուեցաւ, մեծ գովեստով կը խօսի նորընտիրին մասին որ նախորդին աշակերտած էր և անոր աջ բազուկն էր:

Արդարեւ Հաղբակեցիին պաշտօն տրուեցաւ Մովսէսին ձեռնարկած մեծագործ վերաշինութեան հարկաւոր դրամը ճարելու փափուկ պաշտօնը, զոր նա յաջողապէս կատարեց, ամէն կողմ ճանապարհորդելով և քարոզելով. և որ նոյն եւ ռանդով շարունակեց շինարար և հնարագիւտ իր վարպետին կիսաւարտ թողած գործերը. մասնաւորապէս Հայ Ազգին Սրբավայրին, Լեւոնիւմի՝ զոր այլազգիները «Իւլ Բիլիսէ» կը կոչէին, վայելչութեան ամբողջացումը, որուն նրբագիծ պատկերը Դավէտիէի Յիշատակարաններուն 1713-ի տպագրութեան առաջին հատորին մէջ կը գտնենք, Հոփսիսիմէ և Գայիանէ սրբօրհններուն ընծայուած եկեղեցիներն ալ միասին:

Հարկ է սակայն, ճշմարտութիւնը յարգելու համար, յայտարարել որ հայկական ճարտարապետութեան պատուաբեր այդ գեղեցկատեսիլ համախմբումին կեդրոնական զլխաւորը մասը՝ բաց ի Մայր Տաճարին զանգակատունէն, Մովսէս կաթողիկոսին անխոնջ և հնարագիւտ գործունէութեան կը պարտինք:

Փակակալութեան, որ է ըսել՝ եկեղեցապահութեան անոր վարած շրջանէն «նա սկսեալ էր (կը հաւաստէ երկրորդ մեր Խորենացին՝ Հ. Մ. Զամչեան Միւսի-թարեան վարդապետը, հատոր Գ, 609), զհետ լինել շինութեան Լեւոնիւմի և փութայր ամենայն ջանիւք ի կատարումն ածել»։ Դժուարին այդ ձեռնարկը սկսելու համար նախ և առաջ պարտից և թուրքերուն Երեւանի քով մղած բուն պատերազմներուն հետեւանքով Մայր Տաճարին շուրջը զիգուած և բլրածեւ բարձրացած փլատակը պէտք էր մաքրել: Գործողութիւն մը որ յանդուգն շինարարը ծանր մտաւորութեան մատնած էր, քանզի այդ փլատակը բրել, պեղել և

տեղափոխելու համար հազարաւոր մշակներ բաւական չէին:

«Ապա հնարեցաւ, կը յարէ պատմիչը, եզրի վելս այսպիսի. ետ բանալ առու ի մերձակայ գետոյն յաւերակն կոյս. ընդ որ սաստկութեամբ յորդեալ ջուրն՝ ողողեաց գետիսն և առեալ տարաւ զամենայն աւերակսն. և մնացին միայն քարինք, որք պիտոյ եղեն յետոյ ի գործ շինուածոյն»:

«Յետ այսորիկ ետ պատել շուրջանակի գոնդեաւն պարիսպ ի հողոյ լայն և ընդարձակ. և կանգնեաց ութն բրգունս ի նմա. և քանդեալ զխարխաւեալ կերտուածս՝ ձեռն էարկ կառուցանել զամենայն՝ քարամբք և թրծեալ աղիւսովք, կրով և բոով: Ի հիւսիսային և յարեւելեան կողմանս շինեաց սենեակս ի բնակութիւն Միաբանից. և ի հարաւային կողմն՝ սեղանատուն — ուր Դավէտիէն և անոր ընկերները ճաշեցին — և փռատուն և տնտեսատուն և համբարանոցս. և յարեւմտակողմն՝ հիւրանոցս և զանազան օթեւանս: Նորոգեաց և գեղեցիցին ըստ մասին՝ և զգմբէթ նորա, ուր ուրեք երեւին քանդուածք»:

Այս բոլորը վերջացնելէն յետոյ Մովսէս կաթողիկոսը եկեղեցին զարդարեց զանազան սպասներով և անօթներով «յորոց մերկացեալ էր բնաւին»:

Փրկիպոս կաթողիկոսն է որ Լուսաւորչայ աջը Լեւոնիւմի փոխադրելէն (1639) վերջը շինարարութեան սկսաւ այլ և այլ քաղաքներու և գիւղերու մէջ եկեղեցիներ կառուցանելով, որոնց մէջ յիշատակութեան արժանի է Օշական աւանին մեծ Տաճարը «ուր էր մարմին Սրբոյն Մեսրոպայ. և ապա նորոգեաց զՏաճար Ս. Աստուածածնի յաւան Բջնի», Փրկիպոսն է որ նորոգեց 1651ին «զվկայարանս Սրբոյն Գայիանեայ և Հոփսիսիմայ. իրրեւ ի հիմանց կառուցեալ զնոսա, զի ի սպառ քանդեալ և աւերեալ էին»:

Այս վկայարանները, ինչպէս վերելքի, վերոյիշեալ նրբագիծ պատկերին մէջ

